Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Կապան համայնքի բնակավայրերի /Կաղնուտ/ ջրամատակարարման ապահովման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/07 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի օգոստոսի 31-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/07 ծածկագրով գնման պայմանագրում 2023 թվականի նոյեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված աշխատանքների չկատարում

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, Կնքված պայմանագիր

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

Կապանի համայնքապետարանի կարիքների համար Կապան համայնքի բնակավայրերի /Կաղնուտ/ ջրամատակարարման ապահովման աշխատանքների կատարման «31» օգոստոս 2022թ. կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/07» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Կապան « 01 » նոյեմբեր 2023թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՔՆՍՏՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն , ի դեմս տնօրեն Աշոտ Իսրայելյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հաշվի առնելով կողմի առաջարկությունը, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ մասը և համաձայն պայմանագրի 8.5 կետի, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի փոփոխությունը:

1.2. Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է հանդիսանում 2023թ. Դեկտեմբերի 1-ը:

1.3.Պայմանագրի Օրացուցային գրաֆիկը /Հավելված 2/՝ համաձայն սույն Համաձայնագրով նախատեսված փոփոխության:

1.4.Պայմանագրի Վճարման ժամանակացույցը/Հավելված 3/՝ համաձայն սույն Համաձայնագրով նախատեսված փոփոխության:

1.5.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կապանի համայնքապետարան	<<ՔՆՍՏՐԱՔՇՆ>> ՍՊԸ
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Երկաթուղայիններ 3/37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<Ակբա բանկ>> ԲԲԸ Կապան մասնաճյուղ
ՀՀ 900312000301 համայնք	ՀՀ 220073331096000
ՀՀ 900312000483 սուբվենցիա	ՀՎՀՀ 09426157
ՀՎՀՀ 09426088	
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.